ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1198-Ա « 04 » մարտի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի Հ.804-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 24.02.2026թ. 20-ել-65185 եզրակացությունը, քաղաքացու դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2013թ. փետրվարի 28-ի «Երևանի Դավթաշենի 2-րդ փողոցի հ.34 բնակելի տան և հողամասի նկատմամբ Հմայակ Սարիբեկի Խաչատրյանի իրավունքները վերականգնելու, 409.71քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.804-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման նախաբանում և 1-ին կետում՝ «709.71» թվերը փոխարինել «575.05» թվերով.

2) Որոշման վերնագրում՝ «409.71» թվերը փոխարինել «275.05» թվերով.

3) Որոշման 3-րդ կետում՝ «քաղաքապետի գլխավոր խորհրդական Հ.Մուրադյանին» բառերը փոխարինել «քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ